# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.2

## ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **26 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 26-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ անվադողերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Ն. Բաղդասարյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ՝ նյութական գծով: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես, տեղեկացվեց, որ 2026թ. հունիսի 24-ին ժամը 10:23:14-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի պատվիրատու, Ուսումնասիրելով

գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ արձանագրում ենք, որ դրանում ուղղակիորեն նշված են կոնկրետ արտադրողների և մոդելների անվանումներ, մասնավորապես՝ MICHELIN X INCITY EV Z, YOKOHAMA 120U, GOODYEAR URBANMAX MCA, CONTINENTAL Conti Urban HA 5, PIRELLI U02, ընդ որում կիրառված է «բացառապես» ձևակերպումը, որի արդյունքում փաստացի բացառվում է այլ արտադրողների մասնակցությունը՝ անկախ նրանից, որ նրանց կողմից առաջարկվող արտադրանքը կարող է լիովին համապատասխանել կամ գերազանցել սահմանված տեխնիկական և շահագործման պահանջները: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ «Գնումների մասին» օրենքի հիմնարար սկզբունքներից են մրցակցության ապահովումը, մասնակիցների նկատմամբ հավասար և ոչ խտրական վերաբերմունքի ցուցաբերումը, թափանցիկության ապահովումը և պետական միջոցների արդյունավետ օգտագործումը: Մեր գնահատմամբ՝ տեխնիկական բնութագրում կոնկրետ ապրանքանիշերի և մոդելների ուղղակի ամրագրումը, ինչպես նաև «բացառապես» ձևակերպման կիրառումը, հանգեցնում է մրցակցության սահմանափակման, անհիմն նեղացնում է հնարավոր մասնակիցների շրջանակը և առավելություն է ստեղծում առանձին արտադրողների համար: Խնդրում ենք տրամադրել իրավական և տեխնիկական հիմնավորում, թե ինչով է պայմանավորված բացառապես նշված ապրանքանիշերի և մոդելների ընտրությունը, և ինչ հիմքով են բացառվում նույն նշանակության, նույն չափսի և համարժեք կամ ավելի բարձր տեխնիկական ու շահագործման ցուցանիշներ ունեցող այլ արտադրողների արտադրատեսակները: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշված պահանջների պահպանման և դրանց բավարար իրավական ու տեխնիկական հիմնավորման բացակայության դեպքում վերապահում ենք մեր իրավունքը կիրառելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության բոլոր միջոցները, այդ թվում՝ ներկայացնելու բողոք գնումների ոլորտում իրավասու բողոքարկման մարմիններին, դիմելու ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով, դիմելու ՀՀ ֆինանսների նախարարության իրավասու ստորաբաժանումներին, ինչպես նաև վիճարկելու գնման ընթացակարգի, տեխնիկական բնութագրի և/կամ դրա արդյունքների իրավաչափությունը դատական կարգով: Տեղեկացնում ենք նաև, որ մրցակցությունը սահմանափակող, առանձին արտադրողների կամ ապրանքանիշերի համար առավելություն ստեղծող պահանջների ներառումը կարող է հանդիսանալ գնման ընթացակարգի բողոքարկման, կասեցման կամ դրա արդյունքների անվավեր ճանաչման հիմք, եթե նման պահանջների համար բացակայում է օբյեկտիվ, համաչափ և իրավաչափ հիմնավորումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք վերանայել նշված պահանջների հիմնավորվածությունը և ապահովել գնման գործընթացի համապատասխանությունը ՀՀ գնումների օրենսդրության հիմնական սկզբունքներին՝ մասնավորապես մրցակցության, համաչափության, թափանցիկության և մասնակիցների նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման մասով: Խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանում սահմանված կարգով:»:

2026թ. հունիսի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի՛ մասնակից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն,

պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը դուրս է իրավերի բովանդակության շրջանակից:»:

2. Հաստատել իրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 1-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը թողնել անփոփոխ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ____________

Ն. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ____________